

1925-ին կորսնցող իր աջ քրին լոյսը եւ միշտ վախի մէջ էր, որ իր ձախն ալ նոյն վտանգին ենթարկուէր:

Կ'ուզեմ վերջացնել խօսքս Վիեննական Մխիթարեան այլ տիտանի մը՝ Հ. Սահակ Եպս. Կոզեանի (1895-1963) բառերով, որ Հ. Տաշեանի վախճանումին բօթն առնե-

լով՝ Բուկարեստէն, 9 փետրուար 1933-ին, կը գրէր Հ. Մեսրոպ Հապոզեան (1887-1974) Աբբաժօր՝ Հանգուցեալը կոչելով «Մե՛ծն, պատիւ մեր եւ պսակ», ինչպէս նաեւ՝ «Շտեմարանն» ու «Ծառն»: Ապա, կը թելադրէ. «Ձանք դիցուք եւ մեք նմանող նորա վարուցն եւ բարուցն լինել»<sup>13</sup>:

13 Մ. Հայունի, Գերպօ. Դոկտ. Հ. Սահակ Եպս. Կոզեան. Դիւանայիճ երկասիրութիւն, Այնճար, 2008, էջ 364:

### ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

#### Հայր Սերոբ Չամուրլեան

Մխիթարեան միաբանութեան Վիեննա Հաստատուելու 200 ամեակի տօնախմբութեան շրջանակներում, երբեք զարմանալի չէ, որ մեր ուշադրութիւնը սեւեռենք նաեւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան կրթական առաքելութեան՝ եւ դպրոցներուն վրայ:

Արդարեւ, «երբ Վիեննական Մխիթարեաններու Իսթանպուլի կրթական գործին վրայ կը խօսուի, իբրեւ սկզբնաւորութիւն նկատի կ'առնուի 1825 թուականը: Իրականին Վիեննական Մխիթարեան Հայրերու գործունէութիւնը սկսած է 1811-ին, Իսթանպուլի արուարձաններէն Գանտլիլի մէջ ամառնային դպրոցով մը եւ նոյն տարւոյն նոյեմբեր 19-ին բացուած է ձմեռնային դպրոց մը՝ սեպհական Հոդի վրայ, Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մօտ»<sup>1</sup>:

Սակայն աւելի վաղ ժամանակներէ սկիզբ կ'առնէ Մխիթարեան կրթական առաքելութիւնը եւ դպրոցներու գործունէութիւնը, յարաճուն թափ ստանալով, ազգային գիտակցութիւն եւ տուեալ ժամանակ մրձակցութեան անհրաժեշտ գիտելիքները հաղորդելով Հայ Հասարակութեան Համեստագոյն ներկայացուցչին անգամ:

Սկիզբնաղբիւրը՝ անձամբ Հիմնադիրն է, Մխիթար Սեբաստացին, որ ամբողջ կեանքը նուիրեց սերունդներ դաստիարակելու գործին, ոչ միայն իր ձեռասուն աշակերտներուն, այլ ամբողջ Հայ ժողովուրդին՝ գրահրատարակչութեան միջոցով: Այս

դաստիարակութեան հիմք կը կազմէր Դաւթի Սաղմոսը, Քրիստոնէական վարդապետութիւնը, բարի վարքը, աղօթքը, քերականութիւնը, բառգիրքը: Ասոնցմէ իւրաքանչիւրը կը համապատասխանէ Մխիթարի հրատարակած մէկ աշխատութեան: Բնականաբար, միայն սրտացաւ դաստիարակը կրնար մտայղացումն ունենալ ամէն գնով սորվեցնելու համար՝ Հայաստաւ տաճկերէն գիրք հրատարակել: Մէկ խօսքով, Մխիթար իր սրտին մէջ կը կրէր իւրաքանչիւր Հայորդի եւ հեռաւոր Վենետիկի ափերէն կը փորձէր ջամբել գիտութիւն, լուսաւորել միտքն ու հոգին:

Այդ իսկ պատճառով, երբ Եղիսաբէթուպուլսէն հրաւէր կը ստանայ վարդապետ տրամադրելու կառուցուելիք դպրոցին համար, յանձն կ'առնէ «ի սուրբ գործդ յայդ»<sup>2</sup> երկու վարդապետ տրամադրել, եւ 1746-ին սկիզբ տալ այդ «Հոգեշահ բարեպաշտական գործս, ի փառս Տեառն»<sup>3</sup>:

Այս առիթով Մխիթար յորդորական նամակներ կը գրէ իր երկու վարդապետներուն, Հ. Ղազարոսին եւ Հ. Մարկոսին, ուր տարբեր անգամներ, ուղղութիւններ ցոյց կու տայ, եւ մենք կարող ենք Մխիթարի Համոզումներուն ծանօթանալ:

Առաջին եւ կարեւորագոյն Համոզումը՝ միաբանութիւնն է. «Երկոքինդ իբր միով հոգով եւ առ միմեանս խոնարհութեամբ եւ հպատակութեամբ զգործն յառա-

1 Պօղոսեան, Հ. Եփրեմ Վրդ., Համայնապատկեր Վիեննական մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, հտ. Ա., Իսթանպուլ 2008, էջ 81:

2 Լամականի, Առ Հ. Մարկոս - Պաշվալով, 22 Հոկտեմբեր 1746, ԳՄԿ, 855, տող 23:  
3 Նոյն, Առ Հ. Ղազար - Պաշվալով, 15 Հոկտեմբեր 1746, ԳՄԿ, 851, տող 6-7:

ջացուցանել»<sup>4</sup> յանձնարարում է Մխիթար, քաջատեղեակ՝ միասիրտ աշխատանքի արդիւնաւէտութեան, ինչպէս նաեւ երկպառակութեան կործանարար ոյժին: Եղբայրակից միաբանները պէտք է գիտնան կրօնաւորական կեանքի հիմնական սկզբունքները գործի դնել ամէնօրեայ կեանքի մէջ, ի շահ ընդհանուր գործին:

«... Բաժանեցէք ի մէջ ձեր զժամանակն կալոյ ի վերայ նոցա, եւ իւրաքանչիւրդ յիւրում բաժնի ժամանակին անպակաս լինիցի ի սկօլայէն, եթէ ոչ մեծագոյն հարկ ինչ խափանիցէ»<sup>5</sup>: Վարդապետի շարունակական ներկայութիւնը՝ անհրաժեշտ կը նկատուի դաստիարակութեան բարեյաջող ընթացքին:

Դաստիարակը միայն դասատու չէ, այլ իր օրինակով նախ եւ առաջ պիտի համոզէ երիտասարդին, ինչպէս նաեւ տարիքաւորին. «զգաստութեամբ եւ խոնարհութեամբ կենցաղավարել եւ ընծայել զօրինակ բարի ամենեցուն տեսողաց քոց: Նաեւ խոհեմութեամբ կառավարելով դաստիարակեսցես զմանկունսն, որպէս եւ յայլում թղթի զոր յառաջագոյն յղեցի առ քեզ, զկերպն բարեխառնութեամբ վարելոյն գրեալ եմ»<sup>6</sup>:

Ուստի, խոհեմութիւնը եւ բարեխառնութիւնը՝ Մխիթարի բառերով ըստած, պէտք է դաստիարակի անբաժան յատկանիշները ըլլան, եւ կարելի է ըսել թէ այս եզրակացութեան՝ Մխիթար իր կեանքի փորձառութեամբ է որ հասեր էր:

Այստեղ կ'ուզեմ ամբողջութեամբ մէջբերել հատուած մը Հ. Մարկոսին ուղղուած նամակէն՝ ուր կը փայլի Մխիթարի զէմքը, լրջութեամբ, գիտակցելով, քաղցրութեամբ եւ գործնականութեամբ:

4 Նոյն, Առ Հ. Ղազար - Պաշվարով, 22 Հոկտեմբեր 1746, Գմկ. 856, տող 8-9:  
5 Նոյն, տող 10-11:  
6 Նոյն, Առ Հայր Մարկոս - Պաշտարով, 22 Հոկտեմբեր 1746, Գմկ. 855, տող 18-22:

Այսպէս կը գրէ. «Իսկ որքան առ պատիժս մանկանց՝ այնպէս պարտիք վարիլ զի միջակօրէն լիցի եւ քաղցրութեամբ խառնեցեալ: Այսինքն քանոնանման փայտիւ ի յափս ձեռաց՝ տասն կամ տասնեւհինգիցս միջակօրէն հարկանել, կամ ի վայրագոյն տեղիս նստուցանել զմի օր կամ զերկու աւուրս: Եւ կամ եթէ իցէ կարելի՝ մի ժամ կամ երկուս յապաղեցուցանել զուտելն զհաց, եւ այլքն նմանք պատիժք»<sup>7</sup>:

Ահա ոսկեայ միջինը, անհրաժեշտ մարդկային դաստիարակութեան: Երբեմն անհրաժեշտ է պատիժը՝ սակայն պէտք է քաղցրութեամբ խառնուած ըլլայ, ոչ ծայրայեղ: Եւ այստեղ, Մխիթար պատիժի երեք օրինակ կու տայ. առաջինը՝ աւանդական քանակոծելն է, սակայն Մխիթար չի զլանար շեշտելու, որ միայն ափի մէջ պէտք է հարուածել. երկրորդը՝ աւելի հոգեբանական զգաստացնող պատիժ է, երբ կ'առաջարկէ տուեալ անկարգի մէկ կամ երկու օր, իր գրաւած տեղէն աւելի խոնարհ տեղ նստեցնել: Երրորդ պատիժը՝ ոչ թէ անօթի պահելն է, այլ պարզապէս, ուշացնել հաց ուտելը:

«Եւ զայսոսիկ ամենեսեանս առանց զայրացման սրտի ձերոյ ի ներքուստ՝ պարտիք ի գործ ածել. իսկ եթէ արտաքուստ կեղծամբ զբարկութիւն ցուցանիցէք՝ վնաս ոչ է. սակայն ի ներքուստ մի զայրանայցէք, զի զայրացողն ոչ ունի զաչս: Ուստի մանաւանդ ի ձեռն բարի խրատուց եւ քաղցր վարդապետութեան սանձահարել զտղայական ստահակութիւնն»<sup>8</sup>:

Ահա ամենակարեւոր սկզբունքը. երբեք չպատժել սրտի ներքին զայրոյթով: Զայրացողը՝ աչք չունի, կ'ըսէ Մխիթար, եւ փորձը ցոյց կու տայ, որ զայրոյթով սրուած պատիժը երբեք արդիւնքի չի հաս-

7 Նոյն, Առ Հայր Մարկոս - Պաշվարով, Օգոստոս 1746, Գմկ. 873, տող 16-21:  
8 Նոյն, տող 21-26:

նիր, եւ երբեք չէ ընկալուած աշակերտի կողմէն:

Եզրափակելով, Մխիթար իր սեփական սկզբունքն է որ կը հաղորդէ աշակերտներու, երբ կը յորդորէ բարի խրատներով, քաղցր վարդապետութեամբ սանձահարել, զսպել տղայական անկարգութիւնը:

Ինչ կը վերաբերի դպրոցական ծրագրին՝ Մխիթար հակիրճ խօսքերով կը նկարագրէ եւ մեզի կը փոխնցէ իր տեսակէտը, գրելով «որպէս զի մանկունք տեղւոյդ ուսանիցին բարւոք ընթեռնուլ եւ բարւոք գրել. նաեւ ուսանիցին զկատարեալ քրիստոնէական վարդապետութիւն, եւ զբարւոք կենցաղավարութիւն: Ընդ յառաւօտն իբրեւ զարթնուն ի քնոյ՝ ջերմեռանդապէս աղօթել, եւ զյառաջադրութիւն բարւոք կելոյ վասն աւուրն առնել. նաեւ յերեկոյի զքննութիւն սրտի եւ որ առ այս պատկանի հանդերձ աղօթիւք առնել: Եւ որք կարող իցեն եւ յառաջանայցեն, նոցա նաեւ փոքր ինչ զքերականութիւն ուսուցանել»<sup>9</sup>:

Կարդալ-գրել սորվելուն հետ անհրաժեշտ է «կատարեալ» սորվիլ քրիստոնէական վարդապետութիւն եւ բարի կենցաղավարութիւն: Առաջդիմողները՝ քերականութեան կ'անցնին: Իսկ առաւօտեան աղօթք եւ առաջադրանք՝ լաւ ապրելու, ինչպէս երեկոյեան սրտի կամ խղճի քննութիւն, անցուցած օրուան նկատմամբ՝ նպատակ ունին համոզուած, գիտակից, ինքնաճանաչ եւ բարեփոխուելու ատակ մարդը կերտել երիտասարդի մէջ:

Ահա այս սկզբունքներով, Մխիթարի միեւնոյն հոգով, նուիրուածութեամբ եւ ջանասիրութեամբ, մխիթարեան Հայրերը ստեղծեցին կրթօճախներ, հոն ուր հայը հասած էր, եւ հնարաւորութիւնները կը թոյլատրէին, անխոնջ աշխատանքով զարգացնելով եւ արդիացնելով ուսումնադի-

9 Նոյն, Առ Հայր Մարկոս - Պաշվարով, 28 Յուլիս 1746, Գմկ. 834, տող 17-23:

տական եւ հոգեբարոյխօսական մեթոտները, փորձելով կամրջել Հայրենիքը Եւրոպայի հետ:

Եւ այսպէս, Վիեննայի Մխիթարեան դպրոցները միշտ վայելեցին Աւստրիական կայսրութեան եւ ապա պետութեան բարձր հովանաւորութիւնը, եւ Վիեննայի մէջ դաստիարակուած եւ բարձրագոյն ուսումները աւարտած հարիւրաւոր վարդապետները եւ եղբայրներ, երկու հարիւր տարուայ ընթացքին նուիրուեցան հայ պատանիի դաստիարակութեան գործին, վառուած Աստուծոյ, Ազգին եւ հարազատի սիրով:

Գիտութիւն եւ կրօն, Մխիթար Սեբաստացու բնորոշ սաւառնելու երկու թեւերը միշտ առձուր թռիչք պարգեւեցին իր աշակերտներուն, եւ անոնց միջոցով Հայորդիներուն:

Տասնըջորս անուն կրնանք թուարկել, Վիեննայի Մխիթարեան դպրոցներու հետ կապուած, սկսած երկբեղկուամի առաջին տարիներէն մինչեւ Մխիթարեան միաբանութեան միութիւնը:

1. Թրիեստ, 1775-1810, 1859-1877
2. Կոստանդնուպոլիս, 1825-էն առ այսօր
3. Եդիսաբէթուպոլիս, 1773-1788
4. Իզմիր, Չմիոնիա, 1846-1922
5. Կոստիմա, Բէօթաբիա, 1832-1834, 1919-1920
6. Այտըն, 1880-1922
7. Էրզրում, Կարիմ, 1913-1915
8. Քորֆու, 1923-1924
9. Աթէնք, 1924-1936
10. Սոֆիա-Փլովտիւ, 1926/8-1949
11. Պէյրութ-Հազմիէ, 1930/7- ցայսօր
12. Գահիրէ, Հէլիոպոլիս, 1934-1964-70
13. Պոսթոն, 1963
14. Լոս Անճելէս, 1979-ցայսօր

Երկար կարելի է խօսիլ իւրաքանչիւր դպրոցի համար, հաստատուելու մանրամաս-

ները, առաջին նուիրեալները, կառուցի հետ կապուած խնդիրները, տնտեսական հարցերը, աշակերտներու հաւաքագրման եղանակը, քանակը, օրակարգը, դասացուցակը:

Ամփոփելով, կրնանք ըսել թէ վարժարանները հիմնուած են միշտ հայ հասարակութեան փափաքով, անձնազոհ միաբաններու նուիրական աշխատանքով, դրամական մեծ դժուարութիւններով:

Այնուամենայնիւ, Մխիթարեան Հայերը միշտ ուզած են մատուցել հայ պատանիին եւրոպական բարձր մակարդակի ուսում եւ կրթութիւն. այդ նպատակով միշտ դասաւանդուած են օտար լեզուներ, ինչպէս ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն եւ գերմաներէն, իսկ դասական լեզուներէն՝ լատիներէն եւ յունարէն, բարձրագոյն դասարաններու համար: Ժամանակին համընթաց, նորարար աշխարհի հետ քայլ պահելու համար, ոչ մէկ ջանք ու տանջանք չէ խնայուած, այլ մեծագոյն նուիրումով եւ փութաջան աշխատանքով, թարգմանաբար եւ կամ իւրովի Մխիթարեան Հայերը հեղինակած են դասագրքեր եւ անոնցմով դասաւանդած են ամենաարդիական առարկաներ, ինչպէս առողջաբանութիւն, հանքաբանութիւն, վաճառականութեան օրէնսդրութիւն, մեքենաբանութիւն, քաղաքական տնտեսագիտութիւն, ճարտասանութիւն, հոետորութիւն, սղագրութիւն, հաշուակալութիւն, աստղագիտութիւն, տոմարագիտութիւն, նաւուղղութիւն, եւն., նպատակ ունենալով «բարոյական կրթութեամբ ու հիմնական գիտութիւններով տղայոց սիրտն ու միտքը մշակել ու զարգացընել, որպէս զի ետքէն կարող ըլլան իրենց վիճակին պարտքիրը կատարել եւ հասարակութեան ու ընտանեաց պիտանի ու պատուաւոր անդամներ ըլլալ»<sup>10</sup>: Աւելորդ չեմ նկատեր յիշել նաեւ այն փաստը որ 1847 թուականին, Ձմիւռնիոյ դպրոցը կը համալրուի Վիեննայէն

10 Պօղոսեան, Համայնապատկեր, հտ. Բ., էջ 93:

ժամանած բնագիտութեան տարբեր փորձեր կտարելու համար սարքեր եւ սարքաւորումներ, որ ոչ միայն աշակերտութեան հետաքրքրութիւնը կ'արթնցնէ, այլ քաղաքի մեծամեծներու ուշադրութիւնը կը գրաւէ, եւ նոյնիսկ տեղւոյն իտալացի եպիսկոպոսը հիացումով կը հետեւի գործնականօրէն ցուցադրուած բնագիտական փորձերուն:

Պատմական տարբեր անցուղարձերէ, բնական աղէտներէ եւ մարդկային հաշուեհարգարներէ բազմիցս տուժելով Հանդերձ, Մխիթարեան կրթական առաքելութիւնը կը շարունակուի առ այսօր, նուիրեալ միաբաններու անձնուրաց զոհողութեան շնորհիւ:

Այսօր, Պոլսոյ մէջ, «Փանկալթիի Մխիթարեան Լիսէ» կը գործէ տնօրինութեամբ Տիկին Եւա Օրագեանի եւ երկու Մխիթարեան Հայերու Հ. Սարգիս Վրդէրմէնի եւ Հ. Յակոբոս Վրդ. Զօփուրեանի անխոնջ աշխատանքին շնորհիւ:

Պէյրութի Հաղմիէի դպրոցը եւս առ այսօր կը գործէ, շնորհիւ Հ. Յովսէփ Վրդ. Թոփալեանի երկարամեայ նուիրուած աշխատանքին:

Լոս Անճելէսի դպրոցը եւս կը գործէ այսօր Միացեալ Նահանգներու մէջ, Հ. Դաւիթ Ղազարեանի եւ Հ. Օգոստինոս Վրդ. Սեքուլեանի ջանքերով:

Ներկայիս, որպէս միացեալ միաբանութեան համատեղ գործունէութիւն, Մխիթարեան ութ վարժարաններ կը գործեն, որոնցմէ ամենաերիտասարդը՝ Հայաստանի «Մխիթարեան կրթահամալիր»ն է:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅՈՒՄ»

Տիգրան Սիրունեան

«Հանդէս ամսօրեան», տպագրութեան սկզբնական շրջանում լինելով Հնդեւրոպաբանութեան նորանոր նուաճումների ժամանակակիցը, իր էջերում ի մի է բերել համեմատական ուսումնասիրութիւնների հայերէնագիտական տուեալներ. «Հայերէն լեզուի քննական ուսումնասիրութեան դրդիչն եղաւ»<sup>1</sup>: Զգտելով լինել Հնարաւորինս համահաւաք՝ Հանդէսը տպագրել է եւ օտարազգի, հիմնականում՝ եւրոպացի, եւ Հայ լեզուաբանների աշխատութիւններ, ապահովել է գիտական բազմակարծութիւն՝ հաւաստի եզրակացութեան միջոց դարձնելով բանավէճը: Այս ամէնի արդիւնքում Հայերէնը Հանդէսում ներկայացուել է ցեղակից բազմաթիւ առնչութիւններով, կատարուել են մեծաթիւ ստուգաբանութիւններ, քննուել են քերականական ու հնչիւնական առանձին տարրեր, արձանագրութիւնների լեզուական իրողութիւններ, պարզաբանուել ընդհանուր լեզուաբանական հարցեր:

Հանդէսում տպագրուած յօդուածներում Հայերէնի ցեղակցային կամ փոխազդեցական կապերն ուսումնասիրուած են՝ համեմատութեան եզր ընդունելով կամ մէկ ուրիշ լեզու, կամ տարբեր լեզուների համարժէք միաւորներ: Առաջին դէպքում քննուել է Հայերէնի եւ որեւէ լեզուի կամ լեզուների մերձաւորութեան աստիճանը, միւս դէպքում՝ ուսումնասիրութեան տեսանկիւնը մասնաւորեցուած է, եւ նկատի են առնուած միայն առանձին երեւոյթներ՝ հնչիւնական, քերականական կամ բառային:

1 Յուշարձան գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յոբելիճի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի վիեճակ (1811-1911), Վիեճակ, 1911, էջ 51:

ա. Հայերէնի լեզուական առնչութիւնները

Հանդէսում վերլուծուած են Հայերէնի եւ էտրուսկերէնի այն ընդհանուր եզրերը, որ ուսումնասիրել էր Ս. Բուզէն, տպագրուած է նաեւ նորուեզացի գիտնականի՝ գոթերէնում Հայկական շերտի առկայութիւնը քննող յօդուածը, ապա Հայերէնի եւ լիկերէնի առնչութիւնների մասին աշխատանքը<sup>2</sup>: Այնուհետեւ ամփոփուած են Պ. Ենսենի ուսումնասիրած՝ Հայերէնի եւ խեթերէնի ցեղակցային համարժէքները, Հ. Պեդերսենի՝ Հայերէնի հնչիւնական դիրքի մասին դիտողութիւններ՝ քաղուած «Հայերէն եւ դրացի լեզուները» աշխատութիւնից, Հայերէնի եւ թոխարերէնի միջեւ համեմատական եզրեր՝ Հր. Աճառեանի ուսումնասիրութեամբ, Հայերէնի եւ վրացերէնի աղբրաները՝ որպէս փոխազդեցութեան հետեւանք<sup>3</sup> եւ այլն: Ն. Մառի հա-

2 Տե՛ս Հ. Գ. ՄԷՆԵՎԻՉԵԱՆ, «Նոր հայագիտից երկրորդ երկասիրութիւնը», «Հանդէս ամսօրեայ» (այսուհետեւ՝ ՀԱ), 1891, էջ 70-71, Հ. Ա. Վոյստրովեան, Սոֆոս Պոկկէ եւ հայերէն լեզուի գոթարեցի վրայ ըրած ազդեցութիւնը, ՀԱ, 1895, էջ 227-231, 259-261, Ղ. Բադրուպանեան, Լիկերէն եւ հայերէնը ըստ Sophus Bugge-ի, ՀԱ, 1907, էջ 115-117, 182:

3 Տե՛ս Պ. ԵՆՍԵՆ, Հատերէն եւ հայերէն, ՀԱ, 1904, էջ 180-184, 271-276, Հ. Պեդերսեն, Հայերէն եւ դրացի լեզուները, ՀԱ, 1905, էջ 1-5, 37-41, 150-158, 276-281, 339-346, 1906, էջ 20-23, 68-71, 105-113, 130-135, 193-199, 235-239, 279-287, Հայերէնի դիրքը, ՀԱ, 1929, էջ 117-121, 178-190, Հ. Աճառեան, Թոխարերէն եւ հայերէն, 1912, էջ 37-40, Ա. Սարուխան, Վրացերէն լեզուն հայերէնի հետ համեմատութեամբ, ՀԱ, 1937, էջ 581-587, Սոլտա Գեորգ Ռ., Հայերէնի դիրքը հնդկ-գերմանական լեզուներու ծիրի մէջ (գերմաներէն), ՀԱ, 1953, էջ 72-95, 176-191, 523-552, 1955, էջ 357-373, 551-572, 1956, էջ 218-236, 1957,